

## **ՀՖՖ ԵՐԵԽԱՆՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **Տեղեկատվական թերթիկ: Բռնությունը ֆուտբոլում**

Երեխաները շահում են սպորտից և ֆիզիկական ակտիվությունից, և ֆուտբոլը բացառություն չէ: Ֆուտբոլ խաղալը մտավոր և ֆիզիկական մեծ օգուտներ է տալիս, ինչպիսիք են՝ ուժը, դիմացկունությունը և ճկունությունը, ինչպես նաև ինքնագնահատականի բարելավումը, խնդիրներ լուծելու կարողությունը, առաջնորդության հատկանիշների ձևավորումը: Ֆուտբոլի շնորհիվ երեխաները ձեռք են բերում կարևոր արժեքներ և կյանքի հմտություններ, ինչպիսիք են՝ արդար խաղը, թիմային աշխատանքը կամ նվիրվածությունը: Ֆուտբոլի միջոցով երեխաները ձեռք են բերում ընկերներ, ձևավորում են սոցիալական խումբ, հաճույք են ստանում խաղից և պահպանում են մարզավիճակը: Մանկության տարիներին ձևավորված սերը ֆուտբոլի հանդեպ կարող է հանգեցնել ամբողջ կյանքի ընթացքում խաղից հաճույք ստանալուն: Մրանցից որևէ մեկին հասնելու համար ֆուտբոլը պետք է դրական և հաճելի փորձ լինի երեխաների և դեռահասների համար: Երեխաների հանդեպ կարող է բռնություն գործադրվել կամ նրանց կարող են վնասել ցանկացած վայրում, ընտանիքում կամ ակումբում/ կազմակերպությունում կամ դրսում: Երեխաները կարող են բռնության ենթարկվել պրոֆեսիոնալների, կամավորների, խնամակալների, ընտանիքի անդամների և այլ երեխաների կողմից: Երեխաներին կարող է վնաս հասցվել տարբեր ձևերով, և հաճախ նրանք կարող են ենթարկվել մի քանի տեսակի բռնության: Կան հատուկ իրավիճակներ և վնասների տեսակներ, որոնք, ավելի հավանական է, որ կարող են տեղի ունենալ ֆուտբոլում: Այս իրավիճակների հայտնաբերումը կարող է օգնել համոզվելու, որ ֆուտբոլը դրական փորձ է բոլոր երեխաների համար՝ անկախ տարիքից, սեռից, ռասսայից, կրոնական պատկանելությունից, սեռական կողմնորոշումից, իրավական կարգավիճակից (օրինակ՝ փախստական կամ ներգաղթյալ լինելուց) կամ ֆիզիկական կարողությունից:

### **Վնասվածքները**

Գրեթե ցանկացած սպորտաձևում առկա է ֆիզիկական վնասվածք ստանալու ռիսկ: Այնուամենայնիվ, խաղալու վրա ճնշում գործադրելը կարող է նշանակել, որ երեխաներին ստիպում են գերազանցել իրենց կարողությունները կամ հանդես գալ իրենց տարիքին անհամապատասխան, ինչպես նաև երբ երեխաներին ստիպում են խաղալ վնասվածք ունենալու պարագայում՝ պատճառելով հետագա վնասներ:

## Խաղալու վրա ճնշում գործադրելը

Ֆուտբոլի կարևորագույն բաղկացուցիչը հաղթանակն է: Այնուամենայնիվ, երեխաների խաղի վրա ճնշում գործադրելը կարող է հանգեցնել հոգեբանական և ֆիզիկական վնասների: Հաճախ նմանատիպ ճնշումները գործադրվում են մեծահասակների կողմից, բայց դրանք կարող են կիրառվել նաև երեխայի կամ իր հասակակիցների կողմից: Երեխաների համար խաղին մասնակցելը չպետք է գերակա լինի խաղից հաճույք ստանալուց: Երեխաների համար վնասակար կարող է լինել նրանց խաղալու մղելը և հաջողության հասնելու համար նրանց ծայրահեղ ճնշման տակ դնելը՝ հոգեբանական, հուզական և ֆիզիկական առումներով:

## Ֆիզիկական խնամքը

Ֆիզիկական բռնությունը հաճախ ամենահեշտ ճանաչվող բռնության ձևն է: Ֆիզիկական բռնություն է համարվում ցանկացած տեսակի հարվածների, ցնցումների, այրելու, ճնշումների, կծելու, խեղդելու, նետելու, ծեծելու հետ կապված կամ այլ գործողությունը, որը հետքեր է թողնում մարմնի վրա, ֆիզիկական վնաս կամ ցավ է պատճառում: Երեխաներին հատկապես խոցելի են դարձնում որոշակի վայրեր, ինչպիսիք են հանդերձարանները, լոգարանները և սերտ շփումը ֆիզիոթերապիայի ընթացքում: Այս վայրերը հնարավորություն են ընձեռում այն անձանց, որոնք ցանկանում են երեխաներին սեռական բռնության ենթարկել: Որպես կանոն՝ պետք է հարգել երեխայի անձնական տիրույթը: Եթե բժշկական կամ ինտիմ խնամք կամ բուժում է տրամադրվում երեխաներին, ապա վերջիններս կարող են պահանջել իրենց ընտրությամբ մեկ այլ երեխայի կամ մեծահասակի ներկայություն:

## Գիշերակացով ճամփորդությունները

Գիշերակացները, օրինակ՝ արտագնա խաղերի կամ մարզական հավաքների ժամանակ, կարող են երեխաներին սեռական բնույթի վնաս հասցնել ցանկացողների համար հնարավորություններ ստեղծել: Պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար միշտ պետք է անհրաժեշտ թվաքանակի մեծահասակներ ներկա լինեն: Երեխաների հետ աշխատելիս առնվազն երկու մեծահասակ պետք է մշտապես ներկա գտնվի, որպեսզի երեխաները չկորչեն կամ չհայտնվեն վտանգավոր իրավիճակներում: Հարկ է հաշվի առնել նաև մեկ այլ գործոն՝ արդյոք տրանսպորտային պայմանավորվածություններն ապահով են, օրինակ՝ արդյոք տրանսպորտային միջոցները պիտանի են ճանապարհային երթևեկության համար:

## Սերտ հարաբերությունները

Երեխայի և իր մարզչի կամ այլ օժանդակող անձնակազմի՝ ֆիզիոթերապևտի, բժշկի հետ հարաբերությունները շատ կարևոր են և կարող են օգտակար լինել երեխայի համար: Շատ երեխաներ սերտ և վստահելի հարաբերություններ են հաստատում հատկապես իրենց մարզիչների հետ, որոնք կարող են նշանակալի դեր ունենալ իրենց կյանքում, հատկապես, եթե վերջիններս լավ հարաբերություններ չունեն այլ մեծահասակների հետ: Ինչնից, այս սերտ

հարաբերությունները կարող են նաև երեխաներին վնասելու հնարավորություն ստեղծել: Երեխան հնարավոր է ցանկանա գոհացնել մեծահասակին, կամ մեծահասակը կարող է լինել վստահելի և կշիռ ունեցող անձ, ում ազնվությունը ոչ ոք կասկածի տակ չի դնում: Պետք է հիշել, որ ֆուտբոլում երեխաների անվտանգությունն ապահովելը նշանակում է, որ ոչ ոք «կասկածից վեր» չէ: Սա, իհարկե, չի նշանակում, որ բոլորը կասկածյալ են, այլ ենթադրում է, որ բոլոր ներգրավված անձինք՝ երեխաները, ծնողները կամ մեծահասակները պետք է գործեն համաձայն վարքագծի և վարվեցողության ստանդարտ կանոնների:

### **Թիմում տիրող մթնոլորտը**

Երեխաների ինքնագնահատականի և ինքնավստահության բարձրացման համար շատ օգտակար կարող է լինել թիմի մաս լինելը և սովյալ թիմին պատկանելու զգացողությունը: Թիմում տիրող միջավայրը էական ազդեցություն ունի երեխայի ուսումնական փորձառության վրա: Թիմի ներսում միջավայրը ստեղծում են ֆուտբոլիստները, բայց միջավայրի վրա մեծապես ներազդում է մարզիչը: Օրինակ՝ եթե մարզիչը հստակ հասկացնում է, որ բոլորը պետք է հարգեն միմյանց, և բուլինգը թիմում անընդունելի է, թիմում տիրող միջավայրը ամենայն հավանականությամբ ավելի ողջունելի և դրական կլինի: Եվ հակառակը, եթե մարզիչը ցույց տա, որ իրենք հաղթանակը վեր են դասում խաղին մասնակցությունից, թիմի անդամները կարող են մեղադրել և մեկուսացնել այն երեխաներին, որոնց համարում են մեղավոր խաղը տանուլ տալու մեջ: Ավելին, երեխաները կարող են մտածել, որ որոշ խաղացողներ չեն համապատասխանում թիմին՝ հավանաբար ելնելով իրենց անցած ճանապարհից կամ առանձնահատկություններից: Ավելի մեծ տարիքի կամ անձնապես ավելի մեծ կշիռ ունեցող երեխաները կարող են ձևավորել հիերարխիա՝ ազդեցություն ունենալով այլ երեխաների վրա: Սա կարող է դրական արձագանք ստանալ, բայց հավասարապես կարող է նաև հանգեցնել բացասական հետևանքների կամ բուլինգի, ներառյալ նվաստացման, որին երեխաները դիմանում են թիմի կողմից ընդունված լինելու պատճառով: